# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

« 09 » հունվարի 2023թ. № 1-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

**1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2023 թվականի հունվարի 13-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդ համայնքի ավագանու նստավայրում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2023թ. հունվարի 09**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
13.01.2023թ. թիվ 1-Ա որոշման

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**
**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**Անցկացման վայրը.** Լոռի Բերդի համայնքապետարան
**Անցկացման ժամանակը.** 13.01.2023թ. ժամը 12:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2023թ. հունվարի 13-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. հունվարի 13-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
**(Զեկ. Ա. Ներսիսյան)**

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2022թ. բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
**(Զեկ. Ա. Ներսիսյան)**

3) Հայաստանի Հանրապետ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
**(Զեկ. Մ. Հովսեփյան)**

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի դպրոցներին դրամաշնորհ տրամադրելու մասին:
**(Զեկ. Ա. Մարտիրոսյան)**

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման-նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:
**(Զեկ. Է. Մելիքսեթյան)**

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի և բազմաֆունկցիոնալ էքսկավատորի մատուցած ծառայությունների սակագները հաստատելու մասին:
**(Զեկ. Է. Մելիքսեթյան)**

2. Ելույթներ, առաջարկություններ:
3. Նիստի փակում:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » հունվարի 2023թ. № 2-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետերի և 41-րդ հոդվածի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023թ. հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2023թ. հունվարի 09**

**գ. Լոռի Բերդ**

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2023թ. հունվարի 9-ի թիվ 2-Ա որոշման

# Պ Լ Ա Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| I ԱԻՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն | | | | | | |
| 1.1 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն | | | | | | |
| 1.4.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Լոռու մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՏՈՒ-ին: | Հունիս, Դեկտեմբեր | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| 4. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ | | | | | | |
| 4.3 | Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը. | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ Լոռու մարզի համայնքներ | |
| | 1) Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հիշեց հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում; | | | | | |
| | 2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ համատեղ գործող 5 հենակետերի կարողությունների զարգացում և 3 նոր հենակետերի ստեղծում: | | | | | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **6. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 6.2 | Մասնակցություն մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարահանման պլանների ճշգրտմանը: | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան պաշտոնատար անձինք | |
| 6.3 | Ջրահավաքային նախապատրաստության հարցերով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերման աշխատանքների իրականացում: | | | | | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **12. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 12.3 | Լոռու մարզի պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար-պարապմունքների անցկացում: | Յուրաքանչյուր կիսամյակ | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան պաշտոնատար անձինք | |
| **14. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 14.2 | Ռազմական դրության ժամանակ ՔՊ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, ՊՆ չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտում: | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ ՀՀ ՊՆ ԶԱՀԾ ԼՄ ՏՍ | |
| 14.3 | ՓԾ տնօրենի 30.04.2021թ. թիվ Ն/11.6.5/21137-2021 և 12.10.2021թ. թիվ Ն/11.6/54150-2021 հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով մարզի (Երևան քաղաքի) բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: | | | | Լոռու ՄՓՎ անձնակազմ | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **16. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 16.1 | ԱԻՆ ՓԾ Լոռու ՄՓՎ ծառայողների և ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության ոլորտի մասնագետների հետ ՀՀ Լոռու մարզի կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում. | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման բազայի կազմակեր-պություններ | |
| | 1. ՀՀ Լոռու մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև առաջնության կազմակերպում, անցկացում և մասնակցություն հանրապետական առաջնությանը. | | | | | |
| | 1) մարզային; | Մարտ | | | | |
| | 2) հանրապետական: | Ապրիլ | | | | |
| | 2. Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման և ուսուցման կազմակերպման վերաբերյալ զեկույցի ներ-կայացում: | 11.07<br>13.12 | | | ՄՓՎ անձնակազմ | |
| 16.10 | Մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հա-տուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկա-ցում: | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Համապատասխա կազմակեր-պություններ | |
| | Խոհանոցում էլ. մալուխների կարճ միացումից առաջա-ցած հրդեհ: Ծխապատ գոտուց մարդկանց տարահա-նում: | 15.03 | ՄՓՎ պետ | №40 ՀՓՋ | Սվերդլովի միջնակարգ դպրոց 1-ին փողոց փակուղի 7 շենք 1 | |
| | Հրդեհաշիջման և տարահանման կազմակերպում | 13.09 | | | Յաղդանի հիմնական դպրոց 1-ին փողոց նրբանցք 3 շենք 2 | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **19. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 19.9 | Համայնքների և կազմակերպությունների ՔՊ պլանների ու պլան-ժամանակացույցերի ճշգրտում : | Մինչև 10.03 | Լոռու մարզպետ ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| 19.11 | «Լոռու մարզի բնակչության տարահանման պլան»-ի ճշգրտում : | Տարվա ընթացքում | | | | |
| 19.12 | Արտակարգ իրավիճակներում գործելու (աղետների ռիս-կի կառավարման և արտակարգ իրավիճակներում գոր-ծելու) պլանների ճշգրտում : | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ